թիւը կանցնի 850-ը, ինչպէս հաւատացնում էր ինձ մի ծանօթ ուսուցիչ. խնդրամատոյցների թիւը չափազանց մեծ է, այնպէս որ մի ազատ տեղին գալիս է 6—7 հոգի։ Գիմնազիան ունի այժմ 17 հիմնական և զուգընթաց դասարաններ. նոյն դրութեան մէջ են և բէալական դպրոցը և օրիորդաց գիմնազիան։ Ուր որ գնում էք ձեզ միայն մի պատասխան են տալիս «տեղ չկայ»։ Մինչ. իսկապէս այնպիսի մի անել դրութեան մէջ ենք գտնւում, որ ոչ մի կերպ ցաւին դարման անել չէ կարելի։ — Երկրորդ արական գիմնազիայի կարիքը աւելի աչքի են ընկնում. կան և երկու մասնաւոր կիսագիմնազիաններ էլ. մէկը օրիորդաց և միւսը տղայոց, սակայն դրանք կարող են բաւարարութիւն տալ միայն ունեւոր մարդկանց որդիներին. ուսանողների մեծամասնութիւնը կազմում են չունեւորների մանուկներ, իսկ նրանք տարեկան 100 ռուբլի միայն ուսման վարձ տալ անկարող են։ Քաղաքային վարչութիւնը, ի հարկէ, այս խռարանցումը տեսնում է, բայց մտածում է թէ ոչ—այդ խնդրին մի կերպ լուծումն տալ—դրականապէս կարելի է ասել ոչ. նա միշտ արդարանում է նրանով, որ անգիր արած ասում է, «միջոց չունինք», սակայն դա այնպիսի մի չարիք չէ, որի առաջն առնել անհնարին լինի, պէտք է միայն բոլոր հոգով ցանկալ, և միջոցներ կըստեղծուին, հօ չէ կարելի պահանջել, որ հասարակութիւնը իւր որդիներին դպրոց չուղարկի—ամեն ծախքի մէջ կարելի է և պէտք է խնայող լինել, բայց կրթական գործի մէջ արած կամ աւելի ճիշտն ասած, «խնայուած» խնայողութիւնը անմտութիւն է, իսկ այդ տեսակ «խնայողութիւն» առաջացնող անտարբերութիւնը—պախարակելի։ Ես գուցէ պէս հարուստ քաղաքում կարելի է ունենալ մի քանի գիմնազիաններ, այո, հարկաւոր է դրա համար միայն ցանկալ և ցանկացածն անմիջապէս իրագործել։ Սակայն չմոռանամ աւելացնելու, որ Բաքուն այժմ առանց «գլխի» է. մեր քաղաքագլուխ Իսեցկին հրաժարած է, տեղը թափուր է այժմ, միւս կողմից մօտենում են քաղաքային ընտրութիւնների օրերը. սակայն հասարակութեան մէջ դեռ ոչ մի շարժում չկայ, կարծես այդ ընտրութիւնները խսկի իրանց չեն վերաբերում. մօտ օրերս կըհրատարակուի ընտրողների վերջնական ցուցակը. ընտրութիւնները տեղի կունենան հոկտեմբեր ամսին։

Ամսոյս 13-ին և 14-ին քաղաքի շատ տեղերում ծածանւում էին ֆրանսիական և ռուսական դրօշակներ ի պատիւ ֆրանսիական հասարակապետութեան Նախագահ Ֆօրի—որ այժմ իբրև հիւր գտնւում է Պետերբուրգ. նոյն օրերը երեկոյեան ամառային կլուբի ճակատը հարաւային կողմից ծածկած էր երկու մեծ ազգերի դրօշակներով և զարդարուած ելեկտրական փոքրիկ գոյնզգոյն ճրագներով. ուղիղ մէջ տեղը—մուտքի գլխին աչքի էր ընկնում նոյն այդ սիրուն գոյնզգոյն ճրագներով յօրինած F տառը—վերևի սրահակում նուագում էր պ. Տրուֆֆիի գեղեցիկ խումբը, որ մէկ մէկ էլ չէր գլանում «Մարսէլիէզ»—ֆրանսիական ազգային հիմն—ածել։ Եղան և շատ շնորհաւորական և բարեմաղթութիւններով լի հեռագրներ տուողներ էլ, ուղղուած նախագահ պ. Ֆօրի հասցէին։ Զգիտենք այսուհետև էլ շոգ օրեր պիտի ունենանք, թէ սա հէնց վերջին շոգ օրերն են.

Արշարունի

***

ՆՈՒԽԻ, 11 օգոստոսի.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

«Արձագանքի» № 89-ում Նուխուց գրած լուր մասին հարուստ ագուլեցոց ներկայացման ներկայ չլինելու վերաբերութեամբ, հարկաւոր ենք համարում յայտնել հետևեալը.

Յայտնի է, որ Նուխում ագուլեցիները միշտ մասնակցել են ազգային բոլոր գործերում և առատ նուիրաբերութիւններ են արել թէ գործով և թէ նիւթապէս և, եթէ այդ բոլորը փաստերով առաջ բերենք, պէտք է որ նուխեցին մի քիչ էլ նեղանայ։ Դրանք բոլորը ապացոյցներ են ագուլեցոց Նուխւոյ ազգային գործերում կուսակցական ոգւոյ բացակայութեան։ Թէ ինչու վերջին ներկայացմանը ագուլեցիք մեծամասնութեամբ բացակայ էին, ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ հանգամանքի բերմունք—առաջինը։ Երկրորդը՝ տոմսակ ծախող պարոնները ներկայացման օրը միայն կէսօրից յետոյ էին սկսել վաճառել և նոյն իսկ Բարեգ. Ընկեր. վարչութեան անդամները օր առաջ չէին հոգացել տոմսակները տարածելու համար։

Շատ ագուլեցի և շատ էլ նուխեցի մինչև այդ օրը չգիտէին թէ ներկայացում կայ։ Այդպիսով իրանց մեղքը քաւելու համար գործին գլուխ կանգնողները մի երկուսի մեղքը, որ իբր թէ յետ են դարձրել տոմսակները, բարձել են շատերի վրայ և ընդհանրացնում։ Տոմսակ դարձնողի մէկը ես ինքս եմ, որ դարձնելով ասել եմ, որ հիւր ունիմ ինքս էլ հիւանդ։ Եւ երրորդը՝ պիէսայի ընտրութիւնը ինքը մի յարգելի շարժառիթ էր։ «Օրիորդ Բեր յանկը» առաջին անգամը չէ, որ Նուխումը տրւում է, ամեն անգամ էլ անյաջող։

Ուրեմն պ. Փայլակը չափազանց միամտութեամբ է ենթադրում որևէ ցոյց մէկի դէմ և կուսակցութիւն երազում։

Պիտի հաւատացնենք պ. Փայլակին, որ ագուլեցին չէ խնայել և չի էլ խնայում տարին մի երկու ռուբլի ներկայացման ընծայել։ Փաստերը ապացուցանում են այդ։

Խ. Խօջամիրեան

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են.—«Մեզանում էլ աւազակների մի խումբ է երևացել. պատահածին կողոպտում են և սպանում, անցեալ օրերում թափուել են Խաչմաղ գաւառի մի գիւղի գիւղացիների վրայ չորսին սպանել։ Ոստիկանութիւնը հետամուտ է եղել բռնելու. տեսնենք.

Էջմիածնի սրբազան սինօդի վճռով, Նուխւոյ գաւառից եօթը քահանաներ են պատժուած աքսորանքի զանազան վանքեր ապաշխարելու, անցեալ օրերը նրանցից վեցը գնացին՝ նշանակուած ապաշխարանաց տեղերը, իսկ մէկը, որ քաղաքիցն է, խնդիր է առաջարկել սինօդին նորից քննութիւն անելու։

Հոգևոր իշխանութեան այս կարգադրութիւնը շատ լաւ տպաւորութիւն է արել Նուխւոյ վիճակի հայ ժողովրդականների վրայ. ինչպէս որ ժողովրդականներից ապօրէն կին ունեցողները հետըզհետէ արձակում են իրանց ապօրէն կանանց»։

***

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ, օգոստոսի 10.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

«ԼԱՒ Է ՈՒՇ, ՔԱՆ ԵՐԲԷՔ»

Ժամանակին «Արձագանք»ի ընթերցողներին արդէն յայտնի եղաւ, որ յուլիսի 31 ին կատարուեց այստեղի «ինքնավարութեան» բացման հանդէսը։ Այդ հանդէսը բարեհաճել էր պատուել իւր ներկայութեամբ Երևանի նահանգապետ պ. Ցիզենհաուզէն, որ իւր բերկրանքը յայտնելով Ալէքսանդրապօլում լինելիք «ինքնավարական վարչութեան» համար, ողջունեց քաղաքացիներին և շեշտեց այն հանգամանքի վերայ, որ քաղաքագլուխ պ. Տէր-Պետրոսեանց ունենալով գիւղատնտեսական բարձրագոյն կրթութիւն (Պետրովսկայա ճեմարան) և լինելով պետական ծառայութիւնների մէջ, մեծ յոյսեր է տածում (և ինքը պ. նահանգապետը լիայոյս է), որ կը կարողանայ քաղաքի հարստութեան աղբիւրները աւելացնել և քաղաքի դրութիւնը բարւոքել, որ սկզբներում շատ դժուարութիւնների և արգելքների չհանդիպեն իբրև նոր գործ։ Այս խօսքերին պ. քաղաքագլուխը մօտաւորապէս այսպէս պատասխանեց՝ իւր ամենահպատակ զգացմունքները սփռելով կայսերական գահոյքի առաջ — ինքը քաջայոյս է, որ այդ յաջողութեան գլխաւոր կարող են լինել՝ մի կողմից պ. նահանգապետի բարեհաճ ուշադրութիւնը և աջակցութիւնը ինքնավարական գործին, միւս կողմից խորհրդի և տեղական ժողովրդի եռանդը և համակրութիւնը։» Եւ այս պ. նահանգապետը շնորհակալութիւն յայտնեց տեղիս գիւղատնտեսներին՝ պ. պ. Արամ Կորանեանցին և Տիգրան Իազբաշեանցին, որ սորա, բացի այն որ իրանց որոշեալ չորս տարի ժամանակամիջոցը անխարդախ և ջերմեռանդ ծառայել են քաղաքին, այլ և վերջին տարի և կէս միջոցը, երբ իրանց ժամանակը լրացել էր և «ինքնավարութեան» հաստատուելը ուշանում էր, նորանք անտրտունջ շարունակեցին այդ գործը առաջ տանել։ Պ. նահանգապետը այդ օրը ուրիշ մի քանի պատուաւոր քաղաքացիների և ձայնաւորների հետ ճաշի էր հրաւիրուած պ. քաղաքագլխի մօտ։

Երէկ, ամսոյս 9-ին, երեկոյեան ժամը 8-ին տեղի ունեցաւ տեղիս ինքնավարութեան առաջին նիստը. իբրև նոր երևոյթ հետաքրքիր է մանրամասնութիւնը։ Ձայնաւորներից բացակայ էին 4 հոգի, երեք քաղաքից բացակայ լինելու պատճառով։ Նստի հարցերն էին. Ա) 2,300 ռուբլու փոխառութիւն Տփխիսի պետական բանկում գտնուած քաղաքի 21,644ր. 71 կոպէկ գումարից, Բ. պ. կառավարչապետի ընդունելութիւնը (Աղէքսանդրապօլ գալիս). Գ. պ. կառավարչապետից խնդրամատոյց լինել քաղաքի համար նշանակութիւն ունեցող որևէ բարեշնորհումն. Դ). Նիստերի օրերը որոշել և քանակութիւնը մինչև յունվար։

«Արձագ.»ի նախընթաց № 39 ի «Ինքնավարութեան գործը և գաւառական վարչութիւններ» մեր յօդուածից ընթերցողին արդէն յայտնի եղաւ մեր քաղաքի ֆինանսական դրութիւնը։ Այս դրութիւնը ներկայացնում է դէֆիցիտ, համարեա տաճկական ֆինանսական պատկերը

Այս օրուայ օրը երբ մենք գործ ենք սկսում և քաղաքային երևի ակնապիշ կերպով սպասում է ինքնավարութեան գործից «հրաշալիք», մեր քաղաքի գանձարանի մէջ կայ ընդամենը 180 ր.—մինչդեռ մինչև յունվար մեզ հարկաւոր է 559ր. 66 կոպ. (ինքնավարութեան տարեկան ծախս հասնում է 12,620)։ Այս հանգամանքը ստիպում է դիմել փոխառութեան, քանակութեամբ 2,300 ր. որ կազմում է քաղաքի բանկում գտնուած 21,644 ր. դրամագլխի 5%։ Քաղաքը առայժմս աւել չէր կարող վերցնել, առանց նախարարութեան թոյլտուութեան, որ էլի բաւական միջոց կը պահանջէ, մինչդեռ հիմայ փողի հարկաւորութիւն կայ։ Գործը որոշուեց դրական կերպով։ Հետևաբար հարցերը ձևակերպուեցան այսպէս.— կովկասի պ. կառավարչապետին հանդիպելու է և ընդունելու, քաղաքային վարչութիւնը իւր կազմով (քաղաքագլուխ և անդամներ)— ի հարկէ աղ ու հացով. իսկ քաղաքում կլինի համեստիկ հրավառութիւն։ Պ. կառավարչապետից խնդրամատոյց լինել քաղաքի կողմից, որ զինուորների բնակարաններին տրուելիք վարձի համար, կառավարութիւնը իւր գանձարանից տայ քաղաքին նպաստ գոնէ 10,000 ռուբլի քանակութեամբ։ Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, զինուորական բնակարանների համար քաղաքը տարեկան ծախսում է 22,000 ռուբլի։ Այս գործին արժանավայել կերպարանք տալու և նրան կատարելու համար, քաղաքային խորհուրդը խնդրեց քաղաքագլխից, որ ինքը յանձն առնի այդ աշխատանքն, նրան իբրև օգնականներ ընտրեց յարգելի պ. պ հաշտարար դատաւոր Նատիրաձէին և քաղաքի փաստաբան պ. Պապաջանեանցին։ Նիստերը լինելու են շաբաթ օրերը—երեկոյեան ժամը 8ից։ Մինչև յունվար կլինին ընդամենը 17 նիստ.

Օգոստոսի մէջ—23ին և 29-ին։ Սեպտեմբերի մէջ — 13-ին, 17-ին և 20-ին։ Հոկտեմբերի մէջ 4 ին. 11-ին, 18 ին, և 25-ին։ Նոյեմբերի մէջ 1 ին, 8-ին, 15-ին, 22 և 29-ին։ Դեկտեմբերի մէջ 5-ին, 13 ին և 20-ին։

Վարչութեան և խորհրդի պաշտօնեաները դեռ լրիւ չեն։ Այսպէս՝ երբ արդէն գործը սկսւում է և ընդհանուր ոյժի կարօտութիւն ունի, պարտք կայ իւրաքանչիւր քաղաքացու և ձայնաւորի վերայ ընդհանուրի շահերը աչքի առաջ ունենալով մօտից ծանօթանալ քաղաքի գործերի հետ, սրտանց վերաբերուել նրանց, որով հնարաւոր կլինի սկզբնական դժուարութիւնները հեռացնել և քաղաքի դրութիւնը լաւացնել։—Արժէր, որ մի քիչ գաղափարին ծառայէր մարդը, մի քիչ ժողովրդի, մեծամասնութեան դրութեան մէջ լինէր, մի քիչ սիրէր...—այսպիսի դէպքում ամեն բան լաւ կլինէր։

Berberis L.

***

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆ, օգոստ. 12.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Անցեալ յուլիսի 27 ին քաղաքիս ս. Գէորգ եկեղեցում կատարուեց Հայաստանեայց եկեղեցու փառաւոր հանդէսներից մէկը, քահանայական ձեռնադրութեան ծիսակատարութիւն։ Հանդիսին աւելի շքեղութիւն էր տալիս եկեղեցում հաւաքուած ժողովրդի խուռն բազմութիւնն ու ընծայեալի անձնաւորութիւնն։ Երջանիկ ս. Կարապետի վանքի վանահայր Մեսրովբ արքեպիսկ. Սմբատեանցը Երանոս վարժապետ Վարդանեանցին՝ իւր հայրենի Կղնութ գիւղի ժողովրդեց վրայ քահանայ ձեռնադրեց, որ օծումից յետոյ Ներսէս անունը ստացաւ։ Հայր սրբազանը ձեռնադրութիւնից յետոյ խօսեց քահանայական ս. և բարձր կոչման մասին։

Նորընծայ Տէր-Ներսէսն իւր ուսման ընթացքն աւարտել է Ներսիսեան Ազգային Հոգ. Դպրոցում, յետոյ Թէոդոսիայի գիմնազիայում ուսուցչական ցենզ ստանալով լաւելեայն գործել է իբրև ուսուցիչ Հայոց եկեղեցական ծխական դպրոցներում, վերջերս Զամախու Թեմի Մառբասայի Հայոց եկեղեցական դպրոցում։ Այսպէս նրա ձեռնադրութիւնն Կղնութ գիւղի նման մի բազմամարդ հայ ժողովրդի համար մեծ մխիթարութիւն կարող է համարուել և գրաւական այդ ժողովրդի բարոյական վերականգնման։

Կղնութը՝ Նախիջևանի գաւառում առաջնակարգ և բազմամարդ գիւղերից մէկը լինելով, ունի մօտաւորապէս 300 տուն բնակիչ, մինչև օրս ոչ մի ուսումնարան չէ ունեցել, բայց ունեցել է տասնեակ գինետներ։ Այս տարի միայն ժողովուրդը համախոսական կազմելով ցանկութիւն յայտնեց գիւղում կառավարութեան տարրական ուսումնարանի համար, որև բացուելու է առաջիկայ ուսումնական տարուանից, ուստի Տէր-Ներսէսի նման մի ուսուցիչ քահանայի կաչառութիւնը զգալի էր կրօնի և հայոց լեզուի դասատու չլինելու պատճառաւ։

Առաջներում գիւղի հովւութիւնը կատարելիս են եղել մշտական 2 3 քահանաներ, բայց վերջին տասնեակ տարիներս այդ բազմանդամ ժողովրդոց բարոյական բաղդը դժբաղդաբար յանձնած էր միայն Խորէն քահանայ Տէր-Մաթէոսեանին։

Հայր Խորէնը այս օգոստոսի սկզբներից, հայր Ներսէսի ձեռնադրութիւնից յետ, գիւղից անյայտանում—հեռանում է, թէ ուր, միայն Աստուած գիտէ։ Ինչպէս քաղաքումս, նաև մերձակայ գիւղերում, այնպէս էլ Կղնութ գիւղում տարածուած է «տենդ» հիւանդութիւնը։ Այս տարի տենդը համարեա թէ համաճարակ կերպարանք է ստացել մեզանում, չկայ տուն, որ մի կամ երկու հիւանդ չունենայ։ Մեր ժողովուրդը, մանաւանդ գիւղական խեղճ և ռամիկ ժողովուրդը սովոր է միշտ իւր ցաւերի մխիթարութիւնը իւր հոգևորների — քահանաների մէջ գտնել, նրանց խօսքերը շատ անգամ իբրև բուժիչ դեղ ընդունել և ամեն մի հիւանդ դէպքերում ս. հաղորդութիւն տալ այդպիսիներին։ Այս րոպէիս 1500 հոգուց բաղկացած ժողովրդի բաղդը, նրա հոգևոր դէպքերի կատարումն ճակատագրի կամքին է մնացել, նրա հիւանդը հոգևարքի մէջ գտնուելով, առանց ս. հաղորդութեան է մնացել։ Խեղճ և ռամիկ ժողովուրդն զուրկ լինելով բարեկեցիկ կեանքից, զուրկ մն... է նաև հոգեկան մխիթարութիւն... դրութիւն, որ սարսափ է ազդու... դաւ վրայ։

Ոմանք ասում են թէ Տէր-Խորէնը հիւանդ լինելով գնացել է բժշկուելու, ոմանք էլ պատմում են թէ նրա որդին՝ հիւանդ է տարութեան մէջ ուստի և տէր հայրը գնացել է նրան բերելու, բայց ոմանք էլ հաւատացնում են թէ գնացել է արտասահման ճանապարհորդելու՝ իւր ձայնը կատարելագործելու։ Թէ այսպէս և թէ այնպէս Տէր Խորէնը չկայ և նրա անյայտանալու պատճառն տակաւին մնում է հանելուկ, որովհետև մերձակայ հոգ. իշխանութիւնն այդ մասին ոչինչ չգիտէ և հետևապէս կարգադրութիւն էլ չէ արել Կղնութայ ժողովրդոց հոգևոր պէտքերի կատարման համար մի այլ քահանայի մինչև նորընծայ Տէր-Ներսէսի քառասունքի լրանալն։

Ա. Մ. Դիլնազարեանց։

ԻՄ ԵՐԳԱՐԱՆԻՑ

De gustibus non est disputandum.

Եթէ ասես.
Կոկոռն ասաց, զնա՛ խորոզին
—Այս կըլինի հանաք,
Լոկ նուրբ ակնարկ։

Փորձիր ասել.
Ոչ Կոկոռը՝ այլ ականջեղ
Այլանդակը
—Այս կըլինի չանաք,
Մի դաղանակ
Կոմբալ, դանակ։

Դէ, պօյէտ, շարունակիր.
Իսկ իմ երգը
Թանձրամտմին Բրօբդինեագցոց համար չէ,
Ուստի և գրի
Վերջակէտը։

Պարնասի Նորընծայ։

ները միւս պետութեանց ներկայացուցիչներից ոչ աւել ոչ պակաս «վրդովմունքով» տեսնում էր Հայաստանում հոսող արեան գետերը և այդ բոլոր այն ժամանակ, երբ Անգլիայի ճառախօսները «Աստուծոյ գթութիւնը և «զօրութիւնն» էին հայցում «թշուառ հայ ազգի» վրայ և միևնոյն ժամանակ լի ազգային գոռոզութեամբ աղաղակում էին, թէ անգլիական նաւատորմիղը կըյաղթէ ամբողջ աշխարհին, և այդ բոլորն այն ժամանակ, երբ հարիւրհազարաւոր հայ կանայք և աղջկունք լցվում էին հարեմները, երբ հարիւրհազարաւոր հայ մանուկներից մի նոր շլուռած, շահմռած, մաքի և սրտի անհասանելի «որբերի ազգ» էր կազմվում և դեռ շարունակում է կազմուել, և այդ բոլորն այն ժամանակ, երբ միտինգներում, իբրև ցիրկի բեմի վրայ կրթուած անասուն, ի ցոյց էր հանվում հայ կինը ալբիոնի որդոց ոչ թէ ասպետութիւնը, այլ հետաքրքրախառն գութը շարժելու համար։

Պողպատէ ոգի ունեցող ժողովուրդն անգամ կայլասեռուի այդքան սոսորութեան և կեղծիքի ենթարկուելով, ուր մնաց թրքահպատակ հայը, որ դարերի ընթացքում իւր կորցած թիկունքի վրայ կրում է թրքական խարազանի հետքերը։ Ուրիշ է, այո, ռուս կառավարութեան այժմեան քաղաքականութիւնը արևելեան և մասնաւորապէս հայկական խնդրի վերաբերմամբ. Այդ արժ. Մակ Քօլի չափ, և գուցէ, նրանից էլ աւելի լաւ գիտեն ամենքը, բայց խնդիրը այդ մասին չէ, այլ այն՝ թէ ոչինչ հեռաւոր նմանութիւն անգամ չկայ այն վերաբերման, որ ունէր Ռուսիան դէպի բալկանեան քրիստոնեաները և այն վերաբերութեան որ արտայայտուեց վերջին տարիներս և դեռ արտայայտվում է Անգլիայի կողմից դէպի տաճկահպատակ հայ ազգը։ 1876 թուականին ռուսական պետական կանցլեր իշխան Գօրչակովի վերև բերած անկեղծ խօսքերն արտասանելու բայլին հազարաւոր և տասնեակ հազարաւոր ռուս կամաւորներ՝ օֆիցերներ, զինուորականներ, կառավարութեան գիտութեամբ և ցանկութեամբ Բուլղարիայում իրանց արիւնն էին թափում Բալկանեան քրիստոնէից ազատութեան համար և Գօրչակովի կտրական և վճռական խօսքերին անմիջապէս հետևեց կտրական և վճռական գործ. ռուսաց անվերջ զօրաբանակները մտան Թիրակիան, կտրեցին Բալկանը և անցան ու հասան մինչև Եըլդըզ-Քեօշկի պատերը մի կողմից, իսկ միւս կողմից մինչև Էրզրում։ Եւ մինչդեռ այժմ արժ. դօքտոր Մակ-Քօլ և նրա նման բազմաթիւ անգլիացի արժանապատիւ և գերապատիւ և բարձրապատիւ և զօրաւոր և առաքինի և մարդասէր, Քրիստոսից աւելի քրիստոնեայ համարուող մըստըրները միայն ծիծաղելի սպառնալիքներ և հայհոյանքներ են կարդում սուլթանին, անուանելով նրան «Եըլդըզ-Քեօշկի անարգ երկչոտ», «Մեծ մարդասպան» հայլն հայլն, ռուս բանակը 1877 թուականին իրապէս այդ անարգ երկչոտի մեծ մարդասպան ձեռքը ոչ միայն կանգնեցրաւ, այլ և նրա ճնշումից ազատեց միլիօնաւոր քրիստոնեաներ, նրանց քաղաքական ինքնուրոյն կեանք պարգևելով։ Եւ մենք հաւատացած ենք որ արժ. Մակ-Քօլ ոչ միայն իրաւունք կտայ մեզ կրկնել թէ voila comme on écrit l'histoire!, այլ և ինքն համոզուած է և ինքն իսկ կըկրկնի թէ c'est l'histoire! Անցուած երկիրը չէ կարելի վերականգնել քաղաքական ենթադրութիւններով, փաստը չէ կարող ոչնչանալ այդպիսի ենթադրութեանց առաջ, յոյսերի զոհ եղած ամբողջ մի ժողովուրդ չէ կարող ինքզինքը խաբել նոր սնոտի այնպիսի յոյսերով, որոնք անցեալի միայն փշրանքները և սուտերն են, սա արդէն անսրտութիւն է, սա արդէն ծաղր է։ «Փոքր-Ասիայի լեռների վրայ անգլիական նաւեր չեն կարող շարժուել», այս «իմաստուն» համարուած խօսքերն ասել է Սօլզբիւրին իբրև մի վճիռ, մի դատապարտութիւն հայերի բնաջնջման. բայց որովհետև այդ աֆորիզմի նման ասացուածը պատկանում է լորդ Սօլզբիւրիին, լսողների ուղեղը այդ խօսքերի առաջ գրուած անհոգի վերջակէտի պէս էլ կանգ է առել։ Եթէ այդ խօսքերն ասէր մի հովիւ, ոչ ոք նշանակութիւն անգամ չէր տալ, այլ նրան կըհամարէին «միամիտ», որ չէ հասկանում թէ աշխարհը գիտէ որ նաւերը ջրերի վրայ են շարժվում, բայց Սօլզբիւրին է ասել. . . Շատ գեղեցիկ, իմաստնագոյն խօսքեր. բայց միթէ Միջերկրականը Դարդանելը, Բօսֆորը, Մարմարան եւ ցամաքներ են, ուր «անգլիական նաւերը չեն կարող շարժուել», Բայց ճիշտ այն ժամանակ երբ Կ. Պօլսոյ փողոցներում «շների պէս էին ջարդում հայերին» (ինչպէս չէին ամաչում գրել եւրոպական լրագրները), երբ ի լուր ամբողջ աշխարհի այնպիսի զազանութիւններ էին կատարվում Հայաստանում, որին նոյն իսկ վագրերը և բորենիները անընդունակ են կատարելու, երբ ոչ միայն Եւրոպան էր «վրդովվում» այլ նոյն իսկ մահմեդական արաբ ուլէմները, որոնց սուլթանին գրած անէծքները և նախատինքներն ու բողոքները խնամքով տպագրում էին անգլիական լրագրները, այդ սոսկալի դժոխային օրերին Կ. Պօլսոյ ջրերում, Բօսֆորում ո՞վ տեսաւ դեսպանութեան պաշտպանութեան համար նշանակուած մի պահականաւից աւելի որևէ անգլիական զրահակիր. բայց այդ զրահակիրներն անծանօթ չէին այդ ջրերին, այո, այդ «աշխարհին յաղթող զրահակիրները և մարտանաւերը» 1877 թուին անարգել անցան Դարդանելը և շարունակեցին Սան-Ստեֆանոյի առաջ, որպէս զի յետ դարձնեն ռուսական բանակը, որ կռվում էր կիսալուսնի դէմ յանուն ազատութեան միլիօնաւոր քրիստոնեաների... և ազատեց»։

Առաջիկայ տողերից ու հեղինակի [գ]րուածքից մեր առաջ բերելիք ցիտատներից ընթերցողը կըտեսնի, որ արժ. Մակ Քօլը վերջ ի վերջոյ գալիս է այն եզրակացութեան, ինչ որ և մենք ենք ասում, ուստի և առ բոլէ կենթադրի թէ աւելորդ էին մեր վերևի տողերը։ Բայց այդ մոլորութիւնից ընթերցողին նախապաշտպանելու համար, դօքտոր Մակ-Քօլին կրկին խօսեցնելուց առաջ, խնդրում ենք կրկին ուշադրութեամբ կարդալ վերև բերած նրա այն տողերը, որոնք վերաբերւում են 1896—97 թուականի ու մեր օրերի ու Ռուսիայի ու Անգլիայի այն ժամանակուան և այժմեան դիրքերին։ Եւ ընթերցողը կըհամաձայնի, որ մեր վրդովմունքն ու վէճն արդարացի է։

Բայց թողնենք որ խօսէ և պատմէ կրկին ինքը դօքտոր Մակ Քօլը։

Նախընթաց գլխում նա բացատրեց Գերմանիայի նենգամիտ քաղաքականութիւնը արևելեան խնդրի վերաբերմամբ. բայց այժմ հաղորդում է այն նշանաւոր փաստը թէ՝ Ռուսաց վեհափառ Ցարի արտայայտած անկեղծ վճռական խօսքերը ազդեցին նոյն իսկ Բիսմարկի վրայ, որ խօսելով բուլղարական կոտորածների մասին ասաց թէ՝ «դա մի փաստ է, որ վրդովվում է ամբողջ Եւրոպայի խիղճը» և ապա աւելացրաւ որ, «եթէ վեհաժողովը ոչ մի հետևանքի չգայ, եւ Ռուսիան վճռի զէնքի ոյժով ձեռք բերել այն, ինչ որ չկարողացաւ խաղաղ ճանապարհով ձեռք բերել, մենք չպէտք է գնենք մեր veto'ն նրա գործողութեանց դէմ . . .»։

Եւ խսկոյն դրանից յետոյ արժ. Մակ-Քօլ աւելացնում է «իսկ լորդ Բիկոնսֆիլդը առաջարկեց պատերազմել Ռուսիայի դէմ՝ դաշնակցելով Աբդուլ Համիդի հետ», մինչդեռ Ֆրանսիան, Իտալիան և նոյն իսկ Աւստրիան ոչ մի արգելք դնել անգամ չմտածեցին Ռուսիոյ դէմ, որ միտինգներ չէր կազմում, այլ զինուած զօրաբանակներ, որոնք իրենց արիւնով պիտի ազատէին ճնշուած և անարգուած քրիստոնեաներին։

Այս բոլորից յետոյ արժ. Մակ-Քօլը ընդունում է արդէն իրեն և ուրիշներին մխիթարուելու տօն ասելով. ես չեմ կարծում (կարծեցէք) որ այն ժամանակներից անցած 19 տարիները ոչընչացրած լինեն քրիստոնեայ Եւրոպայի բարոյական զգացումը։ Այդ զգացումը չէ մեռած, այլ միայն քնած է. . . և եթէ լորդ Սօլզբիւրին ցանկանայ Անգլիայի այժմեան դիրքը համաձայնել Ռուսիայի դիրքի հետ 1877 թուին, ես հաւատացած եմ որ նա իւր ետևից կըքաշէ Եւրոպան»։

Եւ հենց խնդիրն այդ «եթէ»ի մէջն է, ու դրանից նոյնքան իմաստութիւն է փչում որչափ կըփչէր այսպիսի մի ֆրազից. «եթէ թուրքերը հայերին չկոտորէին, հայերը ողջ կըմնային»։

Ս. Հախումեան.

(Կըշարունակուի)

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ՈՒՐԱՐՏՈՒԻ ՏԷՐՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ

Պատ. խմբագրութիւն «Արձագանք» օրագրի.

Ձեր գրած «Արձագանքի» թ. 1895, № 8 և 10 համարներն ստացայ շնորհակալութեամբ, և կարդացի ամենայն ուշադրութեամբ «Վան նախահայկական տէրութիւնը և պրոֆեսոր Լէմանի նորագոյն ուսումնասիրութիւնը» յօդուածն ի պրն. Լ. Բաբայեանէ։

Թող ներուի ինձ ուշադրութիւն հրաւիրելու յարգոյ գիտնականաց և թերթիդ հետաքրքիր ընթերցողաց այն կէտին վրայ թէ Ուրարտուի տէրութեան հիմնարկութեան մասին ու հասարակ բոլոր գիտնականներն և մասնագէտներն անգամ սխալ համոզում մը ունին այն է՝ կրկարծեն թէ նոյն Ուրարտուի տէրութիւնը հաստատուած է իններորդ դարու (Ն. Ք.) մէջ։ Այս կարծիքը նշանաւոր Սէյսէն սկսեալ մինչև Լէման՝ այսպէս տիրած է և հրապարակ նետուած գիտնական գրոց և յօդուածներու միջոցաւ։ Այս վերջիններու մասին յարգելի է պրոֆ. Լէմանի Deutsche Rundschau թերթին և ապա ձեր թերթին մէջ թարգմանաբար հրատարակուած յօդուածն ալ, որու մասին կ'ուզեմ քանի մը խօսք ընել, աւելին թողլով յարմար ժամանակի մը։

Ահաւասիկ Լէմանի խօսքերն.

«Հայաստանում իններորդ տարու (կարդա դարու) առաջին կիսից սկսած կազմւում է մի տէրութիւն, որ ասորեստանցիները Ուրարդու (հին կտակարանի Արարատ անուան համապատասխանում է) անունով էին կոչում...։ Սալմանասար Բ.-ն (860—825) է առաջին անգամ շփուել Ուրարդիների հետ»։

Բայց մենք Բաւիանի արձանագրութենէն որոշապէս գիտենք թէ մինչև հիմայ գտնուած յիշատակարաններէն ամենէն հինը Տիգլաթ-Պիլեսար Ա. արքայինն (իրր 1123 Ն. Ք.) է, որ կյիշատակէ Ուրարտուի տէրութիւնն։ (Տես այս մասին իմ վերջին գրութիւնս Note on the Van inscriptions, արտատպուած Journal of the Royal Asiatic Society-ի յուլիսի պրակէն)։ Ուրեմն «Սալմանասար Բ.-ն (860—825)» չէ, այլ Տիգլաթ-Պիլեսար Ա.-ն (իրր 1123) է «առաջին անգամ շփուել Ուրարտուիների հետ» այսինքն կարծեցեալ ժամանակէն ճիշդ երեք դար առաջ։ Ուստի Ուրարտուի տէրութեան ժամանակը պէտք է իններորդ դարէն յետս մղել տանել մինչև յերկոտասաներորդ դարն, և այն առժամապէս, մինչև որ Բաւիանի արձանագրութեան նման ուրիշ մըն ալ գտնուի և տանի զետեղէ աւելի հեռուները, քանի որ Տիգլաթ-Պիլեսարի մը դէմ առնելու չափ զօրութիւն ունեցող տէրութիւն մը չի կրնար նոր կազմուած ազգ մ' ըլլալ, այլ գոնէ մէկ-երկու դար գոյութիւն ունեցող արմատացած տէրութիւն մը ըլլալու է։

Հիմայ գանք ուրիշ խնդրոյ մը, որ երկրորդական կարևորութիւն ունի։

Լէմանի նոյն յօդուածին մէջ կը կարդանք թէ «Սարդուր I-ը Քաղդեացւոց (իմա Խալդեացւոց) առաջին թագաւորն էր». մինչդեռ մենք Վանայ բերդին վրայի արձանագրութիւններէն հաստատ կերպով գիտենք, թէ Սարդուր I-ը հայր մը ունեցած է Լուտիպրի անուամբ, որ երկու տարբեր արձանագրութեանց մէջ ալ յիշուած է։ (Տես Շուլց Ա. Սէյս Ա և Բ)։ Սակայն Լէման իւր միւս աշխատութեանց մէջ յիշած է այս Լուտիպրին իբրև առաջին թագաւոր Ուրարտուի. ուստի այս յօդուածին մէջ յայտնապէս սխալմունք կայ, որ անշուշտ անուշադրութեան արդիւնք է։

Լէմանի մէկ ուրիշ յօդուածին մէջ ալ այսպիսի սխալ մը սպրդած է, դարձեալ նոյն պրն. Լ. Բաբայեանէն թարգմանուած «Ազգագրական հանդէսի». գիրք Ա, էջ 35, ուր կ'ըսուի թէ «մենք Խալդիայի կամ Ուրարտուի ամենահին արձանագրութիւններում Սարդուրի որդի մի ուն Լուտիպրիսին ենք պատահում». մինչդեռ վերը տեսանք թէ Լուտիպրիս Սարդուր Ա-ի հայրն է, և ոչ թէ «որդին». ուստի նոյն հատուածին մէջ «որդի» բառը պէտք է կարդալ «հայր»։

Կ. Յ. Բասմաջեան։

17 օգոստոս 1897 թ.
Փարիզ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐԵՏԷ.—«Times»-ի թղթակիցը հաղորդում է, որ Կրետացի ապստամբների պատգամաւորների ժողովըն, որ օգոստոսի սկզբին Արկոպոս տեղափոխուեցաւ, հետևեալ որոշումներն է արել, 1) բողոքել Ջևվատի Կրետէ գալու և նրա վարմունքի դէմ այստեղ, 2) կազմել ժամանակաւոր կառավարութիւն. 3) ընտրել նոր կարգադրիչ մասնաժողով, ներկայ գործող մասնաժողովի ժամանակաւոր վիճակը վերջացած լինելու պատճառով։ Մասնաժողովին նախագահ առաջարկուած ընտրելիներից ամենից աւելի կշիռ ունին ընտրուելու Հաջի-Դարին և Բենիզալի։ Առաջինը ինքնավարութեան, իսկ երկրորդը Կրետէն Յունաստանին միացնելու կուսակից է։ Ընտրուեցաւ Բենիզալին։ Թղթակցի խօսքերով առհասարակ ժողովը Ալթէնքի խիստ ազդեցութեան ներքոյ էր, բայց նա հաստատում է և այն, որ կղզու խաղաղ բնակիչները բնաւ ժողովին համախոհ չեն և ցաւում են, որ Կրետէի խնդրի լուծման ձգձգումը միջոց է տալիս պահպանելու բնակիչների մէջ վրդովմունքն, որ արգելք է լինում երկրի խաղաղելուն։

—Ինչպէս հաղորդուած էր, ծովակալները կարգել էին զինուորական-դատարանական յանձնաժողով, որ կազմուած է ծովային սպաներից և որ պէտք է փոխարինէ տեղական ատեանները։ Յանձնաժողովի նախագահ նշանակուած է ֆրանսիացի սպայ Ֆան դէն Բրոքը. իսկ անդամներ հինգ այլ ազգերի սպաներ։ Ծովակալները այս առթիւ հրատարակեցին յայտարարութիւն, որի մէջ ասած է, որ «կղզու ներկայ վիճակի պատճառով նրանք պարտաւորուած են առաջն առնել բնակիչների ամեն թշնամական գործողութեան միջազգային զօրքերի դէմ. այդ զօրքերի պատիւն ու այժմեայ յանձնուած են իրանց հոգացողութեան և իրանց կըպաշտպանեն նրանց անպայման կերպով—հարկաւոր դէպքում և բուռն ուժով։ Պետութիւնները, որոնց սուլթանը յանձնել է Կրետէի հոգսը և որոնք ստանձնել են կարգի հաստատութեան և խաղաղութեան վերականգնման պատասխանատուութիւնը, չեն կարող թոյլ տալ որևէ դիմադրութիւն, իրանց նպատակին։ Դատաստանական յանձնաժողովի կազմակերպուելը կղզու անբնական վիճակին և օրինական ատենական հաստատութեանց բացակայութեան հետևանքն է, որոնք կարող լինէին արդար դատաստան կտրել յանցաւորի վերաբերութեամբ։

Եթէ մի բնիկ յանցանք գործէ, յանցաւորը կյանձնուի տեղական իշխանութեանց, իսկ եթէ յանցանքը գործած է հասարակաց ապահովութեան կամ միջազգային զօրաց դէմ, յանցաւորը կ'ենթարկուի յանձնաժողովի դատաստանին։ Ծովակալները վճռած են ձեռք առնելու խիստ միջոցներ ավմկիչների դէմ կարգ և խաղաղութիւն պահպանելու և անպատժութեան վարժուած խռովարարներին սանձահարելու համար։

——

ԲՈՒԼՂԱՐԻԱ.—Բուլղարիայի կառավարութեան դիմադիր կուսակցութեան բոլոր մամուլը դատապարտում է իշխան Ֆերդինանդի այցելութիւնն և հպատակութիւն յայտնել սուլթանին։ Այս առթիւ «Ел. Мак.» լրագիրը գրում է.

«Դատարկ խոստումները, մի քանի աղամանդեայ աստղերով համեմած, կըբնացնեն բոլոր կառավարութիւնն ու ազգը։ Բոլոր կառավարութիւնը այժմ հրաժարուեցաւ տաճկահպատակ բուլղարների վիճակի բարւոքումն ձեռք բերելուց և ձեռքից թողեց Մակեդոնիայի և Սերբին նահանգի անկախութիւնը կորզելու պատեհ բաղէն։ Այժմ մեր զօրքն ու մեր թնդանօթներն այլևս չեն անհանգստացնում Ելդըզ-Քէօշքը, իսկ մեր ներկայացուցիչն, իբրև մի թոյլ անզօր աւատական իշխան, գնաց յայտնելու իւր հաւատարիմ հպատակութիւնը սուլթանին, որ չէ ցաւում իւր աշխատաւոր հպատակների վրայ և որի գործակալները գիշեր ցերեկ աշխատում են բնաջինջ անելու ամեն ինչ բուլղարական օսմանեան կայսրութեան մէջ։ Բայց սրանով չէ վերջանում բոլոր ազգի զգացման վրայ կատարուած ծաղրն ու կատակը։ Երեք նահանգապետները—այն է Ռիրալի, Սօլունի և Սկոպլի—իշխանի Կ. Պօլսում ներկայութեան առթիւ, վարձատրուել են բուլղարական շքանշաններով, ուղղին անյայտ ծառայութեանց համար։ Եւ այսպէս ստորանալու համար ստացուել են լոկ խոստումներ, որոնք երբէք կատարուելու չեն»։

Այս լրագիրը յանդիմանում է բոլոր կառավարութեան, ասելով, որ իշխանի Կ. Պօլիս այցելելից յետ, Մակեդոնիան բոլորովին կորցրեց իւր յոյսն օգնութիւն գտնելու Բուլղարիայի կողմից։

Ժամանակաւոր խմբագիր՝ Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽԻԹԱՐԵԱՆ ՔՈՅՐԵՐ
Իշխանութեան Թոյլտուութեամբ
Ընդունում են գիշերօթիկ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
7-ից 12 տարեկան
ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ։
Հասցէն. Մասլովսկայա Բոլկոյից բարձր, Իզմայլովսկայա փողոց, սեպհական տուն, № 2. (5—1)

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է «Կենտ. գրավաճառան.»
Վ. Փափազեանի Ագահը . . 15 կ.
Նոյն հեղինակի Տուրիստի յիշատակարանից . . . . 20 կ.
(10—2)

Բացուած է բաժանորդագրութիւն
ՐԱՖՖԻԻ
ՍԱՄՈՒԷԼ
Ա. Բ. և Դ. գիրք,
ԴԱՒԻԹ-ԲԷԿ
Ա. Բ. և Դ. գիրքը վերջաբանով
և
ԿԱՅԾԵՐԻ
Լիակատար երկրորդ հատորի.
Առանձին 2 ռ. 50 կ. երեքը միասին 6 ռ.
Լոյս տեսնելուց յետոյ . . 10 ռ.
Տպագրութիւնը լինելու է եւրոպայում ամենաշքեղ կերպով։
Հեղինակի վաճառելի երկերը ստանալու համար են դիմել.—Тифлисъ Арташаку Раффи. արտասահմանի համար. M me Raffi. 26 Loftus Road, Shepherd's Bush. London W. (5—4)

Մամուլի տակից լոյս տեսաւ և վաճառվում է «Կենդրոնական գրավաճառանոցում»
ԳԵՆԵՐԱԼ ՊՕՏՏՕՅԻ
նոր հեղինակութիւնը
ПАМЯТИ СТАРЫХЪ КАВКАЗЦЕВЪ
ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ. (5—5)

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ հոգևոր դպրոցի հոգաբարձական խորհրդարանում օգոստոս ամսոյ 27-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է աճուրդ (առանց կրկնաճրդի) կապալով տալու դպրոցի պատկանել 21 կրպակները, որոնք գտնվում են Ներսիսեան հին դպրոցի հանդէպ։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ, ամենայն օր բացի կիւրակէից և տօներից, առաւօտեան 10—ից 12 ժամն։ (3—2)



Bateaux a vapeur Français „N. PAQUET ET Cie"
Ֆրանսիական շոգենաւային ընկերութիւն
„Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ."
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն կլինի ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկիզբը յունվարի 29/10-ի չորեքշաբթիից, և
ԲԱԹՈՒՄԻՑ ԴԷՊԻ ՄԱՐՍԷԼ՝ ՏՐԱՊԻԶՈՆԻ, ՍԱՄՍՈՆԻ ԵՒ Կ. ՊՕԼՍԻ ՎՐԱՅՈՎ
Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, սկսեալ. 3-15 ԱՆՆՍՕԼԻ շոգենաւը, նաւապետ է ԲԻՒՆԿԻ.
և այսպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երեկ. 4 ժամին Բաթումից—Փարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ, գինը սովորականից պակաս է լինում։

Ապրանքների և ճանապարհորդների մասին պէտք եղած տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին
Բաթումում.—Վիկտոր դ'Արնոյին, Նաբերեժնայա։
Թիֆլիզում.—Գ. Օ. Գ. Բարխուդարեանին, Սիոնի փողոց, նախկին Արծրունու քարվանսարա։
Բաքւում.—Գ. Ս. Դիլլարեանին, Պոլիցէյսկի հրապարակ։
Նովօրօսիյսկում.—պ. Մելխիօր Հերշենրօդերին։ (20—16)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ
Տէր-Յովսէփեանի
(Սօլօլակ, Սադովայա փողոց, տուն № 46, Տէր-Մելքսէթեանի)
Աշակերտների ընդունելութիւնն սկսվում է օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սեպտեմբերի 1 ից։ 15—4)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ու ՊԱՆՍԻՈՆ
Գ. Յ. ՂԱՐԱԳԷՕԶԵԱՆԻ
(ԳՈՅՈՒԹԵԱՆ Ѵ-ՐԴ ՏԱՐԻՆ)
Աշակերտները նախապատրաստվում են մտնելու համար բոլոր կառավարչական միջնակարգ դպրոցների ստորին դասարանները։ Ուսումնարանում աւանդվում է նաև ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒ (տեսական և գործնական), փորձուած վարժուհի—ֆրանսուհու ղեկավարութեամբ։ Ուսումը կըսկսուի սեպտեմբերի 1-ին։ (10—3)

ԱՌԱՆՁԻՆ ԳՐՔՈՎ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ
կարելի է ստանալ «Կենդրոնական գրավաճառանոցում»
Գինն է 1 ռ., ճան. ծախ. 1 ռ. 20 կ.
10 օրինակից աւելի պահանջողները ճանապարհածախս չեն վճարում և դիմում են պ. Մնացական Մարտիրոսեանցի տպարանը, Միքայէլեան փողոց, № 81։ (5—2)

ԼՈՒՍԱՅԱԾ և ԳԾԱԾ ԲՈՒՐԴ
Օթոցների, վերմակների
ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՅԼ ՊԷՏՔԵՐԻ ՀԱՄԱՐ
ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՄԱՔՐԱԾ ԵՒ ՊԱՏՐԱՍՏԱԾ
ԱԼ. ԹՈՒՃՈՒՐԵԱՆՑԻ ԵՒ ԵՐՈՒԱՆԴ ՄԱՆԴԻՆԵԱՆՑԻ
ՇՈԳԵՇԱՐԺ ԼՈՒԱՑԱՐԱՆՈՒՄ
Ցանկացողները կարող են դիմել Միքայէլեան փողոց, Ալ. Թուճուրեանցի մթերքի խանութը, (ոչ հեռու Վօրօնցովի արձանից)։ (50—49)
Հեռաձայն № 168.

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
ստացուած են և վաճառվում են հետևեալ նոր գրքերը. ռ. կ.
Արծրունի բժշկապետ Վ. Ժամանախ Վ. 1897 թ. գինն է. . . . . — 20
Բարխուդարեանց Գ. Բանաստեղծութիւններ. Թ. 1897 գինն է. . . 1 —
Գալֆայեան, Պատմութիւն Նոր կտակարանի 1897 թ. գինն է. . . — 50
» Նոյն Հին կտակարանի, Վ. 1897 թ. գինն է. . . . . 1 —
Խալաթեան Գր. պրոֆ. Ա. և Բ. Մնացորդաց գրքերի հայ թարգմանութիւնը Վ. 1897 թ. գինն է. . . . . . . — 15
Կարապ. վարդ. Երուսաղեմի Յովհաննէս եպիսկոպոսի թուղթը առ Աբաս Աղուանից կաթողիկոս, Վ. 1896 թ. գինն է. . . . . . — 15
» Յովհաննու իմաստասէրի հայոց կաթողիկոսի խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնացելոյ բանին Քրիստոսի և ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս, Վ. 1896 թ. գինն է. . . . . . . — 15
Կոստանեանց Կ. Համամ, արևելցի, Վ. 1896 թ. գինն է. . . . . — 20
» Տէր Պետրոս Ա. գետադարձ, Վ. 1897 թ. գինն է. . — 10
Թ. Նեօլտըքէ, Պատմութիւն Սասանեան տէրութեան, Վ. 1896 գ. . . . — 30
Տէր - Մովսեսեան Մ. Վ., Սոկրատայ պատմութիւն եկեղեցական և վարք Սրբոյն Սեղբեստրոսի, Վ. 1897 թ. գինն է . . . . . . — 60
» Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն, Վ. 1897 թ. գինն է . . . . 2 —
Տէր - Միքելեան Ա., Սրբոյ հօրն մերոյ երանելի Գրիգորի Լուսաւորչի յաճախապատում ճառք լուսաւորք Վ., 1896 թ. գինն է. . . 1 —
Տէր - Մկրտչեան Գ., Ագաթանգեղոսի աղբիւրներից յիշատակ դատակնքած Գորիս և Զմռնի վկայից որ վկայեցին, յուռհա, Վ. 1896 թուի գինն է . . . . — 50
Տէր - Աւետիքեան Ստ., Ղեկավարներ գ. ա. I Կապ բանալը II Մեր Տէրը Թ., 1897 թ. . . . . — 9
Մամուլի տակ է և շուտով լոյս կըտեսնի նոյն Տէր - Աւետիքեանի «Սամիտարնի» վէպիկը (10—6)

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ
ԹԻՖԼԻԶԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ց1-ն Օգոստոսի 1897 թ.

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիզում		Բաժիններում		Ընդամենը	
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ)	156,670	39	222,981	21	379,651	60
2. Ընթացիկ հաշիւ պետական բանկայի բաժնում	925,041	14	530,200	—	1,455,241	14
3. Զեղջումն (Disconto) մուրհակաց երկու ստորագր.	4,017,332	84	2,268,970	68	6,286,303	52
4. Զեղջ. մուրհակաց մի ստորագր. ապահոված տոկոս թղթ.	203,559	70	6,000	—	209,559	70
5. Զեղջումն տոկոսաբեր թղ., կտրօնների և այլն.	21,976	14	19,553	16	41,529	30
6. Փոխատուութիւն գրաւականով						
ա) Պետութ. ապահ. տոկոսաբեր թղթերի	895,394	39	822,109	26	1,717,503	65
բ) ,, ոչ ,, ,, ,,	297,659	—	50,885	—	348,544	—
գ) Ապրանքների	—	—	1,260,025	11	1,260,025	11
դ) Ոսկու և արծաթի	—	—	13,548	14	13,548	14
7. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր	1,983,048	46	101,008	04	2,084,056	50
8. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր	271,695	14	110,501	72	382,196	86
9. Թղթակիցներ՝						
ա) Նոցա հաշիւը (Loro)	11,494,629	73	—	—	11,494,629	73
բ) Բանկի հաշիւը (Nostro)	15,989,994	97	—	—	15,989,994	97
10. Բաժինների հաշիւը Կենդրոնական վարչութեան հետ	1,362,448	86	—		1,362,448	86
Կենդրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	—		866,439	04	866,439	04
11. Պայմանաժամն անցուցած փոխատուութիւն	33,330	—	17,205	—	50,535	—
12. Բողոքուած մուրհակներ	14,285	—	579	70	14,864	70
13. Ընթացիկ ծախսեր	46,799	13	35,079	62	81,878	75
14. Կահ-կարասիք և սկզբնական ծախսեր	2,836	84	6,687	24	9,524	08
15. Յետ ստացուելիք ծախսեր	30,807	69	3,953	73	34,761	42
16. Գնումն և վաճառումն արժեթ. ըստ յանձնարութ	46,750	—	—	—	46,750	—
17. Անշարժ կալուածք	—	—	50,777	82	50,777	82
Ր. Ա.	37,794,259	42	6,386,504	47	44,180,763	89

ՊԱՐՏՔ	Թիֆլիզում		Բաժիններում		Ընդամենը	
1. Հիմնական դրամագլուխ (10000 բաժնետ. à 200 ռ.).	2,000,000	—	—	—	2,000,000	—
2. Պահեստի դրամագլուխ	1,000,000	—	—	—	1,000,000	—
3. Առանձին մասնաւոր դրամագլուխ	14,693	80	—	—	14,693	80
4. Դրամագլուխ զիջուցման անշարժ կալուածքի	—	—	3,768	78	3,768	78
5. Դրամական աւանդներ՝	—	—	—	—	—	—
ա) Պայմանաժամով	4,793,597	12	2,223,964	25	7,017,561	37
բ) ցՊահանջ	205,949	26	156,341	—	362,260	26
գ) Ընթացիկ հաշուով, հասարակ	1,282,776	17	2,162,525	24	3,445,301	41
դ) ,, ,, պայմանաւոր	—	—	144,345	82	144,345	82
6. Թղթակիցներ՝						
ա) Նոցա հաշիւը (Loro)	11,323,613	54	—	—	11,323,613	54
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	16 201,662	49	—	—	16,201,662	49
7. Բաժինների հաշիւը Կենդրոնական վարչութեան հետ	—	—	1,399,713	11	1,399,713	11
Կենդրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	613,161	96	—	—	613,161	96
8. Բանկայի բաժնետէրների անվճար կտրօնների բաժինը	7,262	40	—	—	7,262	40
9. Չվճարուած տոկոսներ աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողութիւնների	113,450	58	73,731	73	187,182	31
10. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	152,504	14	150,014	60	302,518	74
11. Փոխանցիկ գումարներ	85,587	96	72,099	94	157,687	90
Ր. Ա.	37,794,259	42	6,386,504	47	44,180,763	98

Дозволено цензурою, Тифлисъ 21-го Августа 1897 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի. Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 81.